



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 145

ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ

Պիտի փառաբանեմք քեզ, իմ թագաւոր Աստուած,
 քու անունդ պիտի օրհնաբանեմք յաւիտեան, յաւիտեան:
 Պիտի օրհնաբանեմք քեզ ամէն օր:
 Մեծ է Տէրը, եւ ամէն օրհներգութեան արժանի.
 անչափելի է անոր մեծութիւնը:
 Բոլոր սերունդները պիտի գովաբանեն ըրածներդ, Տէր,
 պիտի պատմեն հզօր գործերդ:
 Բարեգութ եւ ողորմած է Տէրը, համբերատար եւ սիրով լեցուն:
 Բոլորին հանդէպ բարեհաճ է Տէրը,
 իր գթութիւնը կը տարածէ իր բոլոր արարածներուն վրայ:
 Թագաւորութիւնդ բոլոր ժամանակներուն համար է,
 եւ տէրութիւնդ՝ բոլոր սերունդներուն համար:
 Տէրը հաւատարիմ է իր բոլոր խոստումներուն մէջ,
 նախանձախնդիր է իր բոլոր գործերուն մէջ:
 Տէրը արդար է իր վարմունքին մէջ,
 Տէրը մօտիկ է անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն,
 բոլոր անոնց՝ որոնք իրեն կ'աղօթեն անկեղծութեամբ:
 Անկեղծ իրմէ ակնածողներուն փափաքը կը կատարէ,
 անոնց աղօթքը կը լսէ եւ կը փրկէ զանոնք:
 Տէրը կը պահէ բոլոր զինք սիրողները,
 մինչ կորուստի կը մատնէ բոլոր ամբարիշտները:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆՈՒԹԸ

ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆ
3:24-30 ԳԼԽ

ԵՐԵԹ ԵՉՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿԱԶԱՏՈՒՄ ԿՐԱԿԷՆ ՈՒ ԿԸ ՄԵԾԱՐՈՒՄ 3:24-30

Կը մոռնանք յաճախ, որ երբ դէպքեր կը պատահին, այդ դէպքերը ունին ընդհանրական բնոյթ: Որքան ալ այդ դէպքը կապուած է անձի մը կամ անձերու, բայց Աստուած այդ դէպքը կ'օգտագործէ ի նպաստ Իր ծրագրին: Ահա այդ դէպքերէն մէկն է Սեդրաքի, Միսաքի եւ Աբեղնագովի դէպքը, որ մեզի կը ներկայացուի Դանիէլի մարգարէութեան մէջ: Երբ երեք երիտասարդները մերժեցին երկրպագելու Նաբուգոդոնոսորի կանգնեցուցած արձանին, որքան ալ այդ արձանը մեծ էր, ազդեցիկ, որքան ալ անոնք պաշտօնին փէր մարդիկ էին, յանկարծ այդ պաշտօնը չկորսնցնելու մտաւախութեամբ, անոնք մնացին անդողուելու եւ մերժեցին հրահանգը ի գին իրենց անձերու վրանգին, որուն հետեւանքը կրակէ հնոցն էր: Անոնք ունէին վստահութիւն առ Աստուած, անոնք գիտէին, որ եթէ Տէրը զիրենք առաջնորդէր պալատին մէջ պաշտօն ունենալու, գիտէին, որ այդ պաշտօնը պարզապէս պաշտօն մը ունենալու համար չէր: Չմոռնանք նաեւ, ու ամենակարեւորը, որ անոնք մնայուն աղօթքի վիճակի մէջ էին, գիտէին որ Աստուած է զիրենք առաջնորդողը ամէն քայլի մէջ: Առաւել եւս անոնք հաստատուն էին իրենց սկզբունքներուն մէջ, մանաւանդ՝ այն պարտիրանին, որ կ'ըսէ. «Լսէ, ով Իսրայէլ, ինձմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս, ուրիշ աստուածներու երկրպագութիւն չընես»: Անոնք նաեւ գիտէին, որ իրենք առաքելութիւն մը ունին ընելիք, վկայութիւն մը ունին փալիք, որուն համար ալ Աստուած պահած էր զիրենք:

Ահա պահը հասաւ իրենց ստրկածը գործնականի վերածելու, ու արով արտայայտելու իրենց հաւատքն ու հաւատարմութիւնը առ Աստուած, յանձն առնելով ամէն գոհողութիւն, ի գին իրենց կեանքին: Հետաքրքրական է, սակայն, որ Աստուած ինչպէս կը գործէ եւ ինչ պայմաններու փակ: Անոր համար ալ յաճախ կը մոռնանք, երբ դէպքեր որ կը պատահին, այդ դէպքերը որքան ալ մեզի հետ կապուած են, մեր կեանքին հետ առնչութիւն ունին, բայց անոնց մէջ Աստուծոյ ծրագիրը կայ: Եթէ Աստուած մեզ կը պահէ, ոչ թէ մեզ պահելու սիրոյն միայն, այլ անով պարգամ մը փոխանցելու, անով վկայութիւն փալու, անով դարձի բերելու փութալ անձը, կամ այդ անձին ճամբով ուրիշը: Այդ երեւոյթն է, որ պատահեցաւ երեք երիտասարդներուն հետ: Երբ Նաբուգոդոնոսոր հրամայեց որ այդ երեք երիտասարդները կրակէ հնոց նետեն, որովհետեւ չհնազանդեցան, բայց այդ երեք երիտասարդները մնացին անվնաս: Առաւել եւս Նաբուգոդոնոսոր ականապես եղաւ, որ այդ երեք երիտասարդներուն հետ չորրորդ մը կայ, որ զիրենք պաշտպանեց: Ի րես այս երեւոյթին, Նաբուգոդոնոսոր այսպէս կ'արտայայտուի ըսելով. «**Ահա ես կրակին մէջ չորս արձակուած մարդ կը տեսնեմ, որ կը քալեն: Անոնք ամենեւին վնաս մը չեն քաշեր: Չորրորդին դէմքը աստուածներու որդիի մը կը նմանի:... Օրհնեալ ըլլայ Սեդրաքին, Միսաքին ու Աբեղնագովին Աստուածը, որ իր հրեշտակը որկեց ու իր ծառաները ազատեց. որովհետեւ անոր ապաւինելով՝ թագաւորին խօսքը անարգեցին ու իրենց մարմինները կրակի փութին, որպէսզի իրենց Աստուծմէն զատ ուրիշ Աստուծոյ մը ծառայութիւն ու երկրպագութիւն չընեն**» 25 հմր, 28 հմր:

Մէկ այլ ուրիշ առիթ Նաբուգոդոնոսոր թագաւորին դարձի գալու: Առաջին առիթով եթէ երազն էր, որ կարծէք անմիջապէս մոռցաւ այդ երազին իմաստն ու նպատակը, ահա Տէրը մէկ այլ ուրիշ առիթ մըն է որ կու փայ, որպէսզի իր աչքերովը տեսնէ այս անգամ ճշմարիտն ու ճշմարտութիւնը: Առաջինի պարագային, կարծէք փակաւին փեսութիւն էր, երազ ու անոր բացատրութիւնը: Երկրորդի պարագային գործնական, իր աչքերովը տեսնելու Աստուծոյ զօրութիւնը, մեծութիւնը, ու ապա դաւանելու եւ ըսելու. «**Ուրիշ Աստուած չկայ, որ կարող ըլլար այսպէս ազատել**» 29 հմր:

Այսօր ալ, սիրելիներ, Աստուած փարբեր-փարբեր առիթներով, երբեմն երազի ճամբով, երբեմն դէպքի մը միջոցով Իր պարգամները հասանելի կը դարձնէ մարդ արարածին, որպէսզի անով անկեալ ու մեղաւոր մարդը դարձի գայ, որպէսզի Տէրը փրկէ: Բայց յաճախ չենք անդադառնար, որ այդ մեր փեսածը, մեր ապրածը, մեր դիմագրաւածը պարգամներ են Աստուծմէ փրութեամբ: Կը մնանք անդողուելի, կը մնանք անփարբեր, ու յաճախ կ'արտայայտուինք ըսելով, բնական երեւոյթներ են, արդէն պիտի պատահին: Բայց այդպէս չեն, այլ Աստուծոյ հայրական հոգածութիւնն է, որ մեզ կը հրաւիրէ ապաշխարութեան, դարձի, որպէսզի փրկուինք ու յաւիտենական կեանքը ժառանգենք: